ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մարտի 2025 թվականի N 333-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 1575-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 14-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԳՌՕՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 1575-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) հավելվածի ցանկը 63-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 64-66-րդ կետերով.

«

64.	2828900000	Նատրիումի Հիպոքլորիդ	Նատրիումի հիպոքլորիդ ժավել	կգ	5 000 000	Իրանի Հանրապե-տություն	Իրանի Հանրապե-տություն	350 000 000	
65.	3402310000	Մակերևութա-ակտիվ միջոց	Մակերևութաակտիվ միջոց՝ լվացող միջոց հումք գծային ալկիլբենզոլ սուլֆոնաթթու GALAXY LAS HF	կգ	1 000 000	Եգիպտոսի Հանրապե-տություն	Եգիպտոսի Հանրապե-տություն	450 000 000	
66.	3402420000	Մակերևութա-ակտիվ միջոց	Մակերևութաակտիվ միջոց՝ ոչ իոնածին, լվացող միջոցների արտադրության համար «AMIDET APA-22»	կգ	50 000	Իսպանիայի Հանրապե-տություն	Իսպանիայի Հանրապե-տություն	1500 000	

».

2) հավելվածի ցանկի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերությունում «8 937 000 000» թիվը փոխարինել «9 887 000 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

21.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ